# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2023թ. ապրիլի 24-ից 27-ը Հունգարիայի քաղաք Բուդապեշտ գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**

Անդրանիկ Հակոբյան

Տիգրան Հարությունյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ ՊԵԿ համալիր հարկային ստուգումների վարչության տրանսֆերային գնագոյացման և հարկային համաձայնագրերի կիրառման բաժնի պետ:

ՀՀ ՊԵԿ համալիր հարկային ստուգումների վարչության տրանսֆերային գնագոյացման և հարկային համաձայնագրերի կիրառման բաժնի գլխավոր հարկային տեսուչ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Հունգարիայի Բուդապեշտ քաղաք, 2023թ.ապրիլի 24-ից 27-ը:

4. **Հրավիրող կողմը.**

Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպություն (ՀՄՆԿ, IOTA):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակից երկրների կողմից գործնական քննարկում՝ տրանսֆերային գնագոյացման կարգավորումների տեսանկյունից ոչ նյութական ակտիվներ ներառող գործարքների վերլուծության վերաբերյալ:

6. **Քննարկված թեմաները.**

- Ոչ նյութական ակտիվներ ներառող գործարքների վերլուծությունը ՏՀԶԿ տրանսֆերային գնագոյացման կարգավորումների տեսանկյունից:
- Միջոցառմանը մասնակից մի շարք երկրների կողմից ներկայացված իրական օրինակներ՝ ոչ նյութական ակտիվներ ներառող գործարքների վերաբերյալ և

վերջիններս քննարկումների արդյունքում վերլուծությունը՝ հաշվի առնելով ՏՀԶԿ տրանսֆերային գնագոյացման ուղեցույցով առաջարկվող մոտեցումները:

**7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Քննարկվում էին ոչ նյութական ակտիվներ ներառող գործարքների գործնական օրինակները՝ ՏՀԶԿ տրանսֆերային գնագոյացման կարգավորումների վերաբերյալ մոտեցումների տեսանկյունից:

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպման ընթացքում քննարկվել է հետագայում նմանատիպ գործնական հանդիպումների անցկացման նպատակահարմարությունը և մասնակից երկրներին առաջարկվել է նշել թեմաներ՝ ապագայում նման գործնական քննարկումներ անցկացնելու նպատակով:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկվել է նման գործնական հանդիպումներ կազմակերպել հաճախակի և համապատասխան թեմաների վերաբերյալ առաջարկները նշել անցկացված հանդիպման վերաբերյալ հարցման մեջ: Գործնական թեմատիկ քննարկումները նպատակ ունեն ապահովելու ավելի արդյունավետ կերպով երկրների միջև փորձ փոխանակումը տրանսֆերային գնագոյացման վարչարարության իրականացման ոլորտում:

**10. Ստորագրությունը, ամսաթիվը:**

02/05/2023թ.